ԴՐՕՇԱԿ

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻԱՆ“ ՕՐԳԱՆ

Մարտ, 1893 թ.

Ոգևորութեան շրջանը վաղուց անցել է. բացառիկ անցքերով գրգռված հասարակութիւնը թուլացաւ և լքվեց, հենց որ չը կրկնվեցին նոյնատեսակ դէպքերը. միւս կողմից, հասարակութեան և երիտասարդութեան մասնակցութիւնը յեղափոխական կազմակերպութեան մէջ որոշ չափով սահմանափակվեց:

Այդպիսով, ըստ երևոյթին, մենք գտնվում ենք անմխիթար պատկերի առաջ:

Մենք „Դրօշակի“ 3 համարում արդէն առիթ ունեցանք այդ մասին խօսելու և այժմ էլ առանձին հըրճուանքով կը կամենայինք շեշտել այդ պատկերի խաբուսիկ անմխիթարութեան վրա:

Այո. թող այդ պատկերը չ՚գայթակղէ և ոչ մի հաւատացող և զգայուն ոգի. գործի գրաւականը ոչ բուրժուա հասարակութեան ատանմունքներումն է և ո՛չ էլ երիտասարդութեան անմիտ և կեղծ ներկայացուցիչների ասէկոսէներում. այդ գրաւականը այնտեղ է... այնտեղ, հեռու – ժողովրդական կեանքի խորքերում, ամենակարող ամբոխի մտքում, նրա որոշ տրամադրութեան մէջ. ժողովուրդն է այն տարրը, որին հարկաւոր է ազատութիւն և որին է միայն վիճակված իր ազատութեան համար անասելի զոհեր կրելու...

Այդպէս պէտք է վերաբերվել հարցին ոչ միայն խընդիրը հիմնովին հասկանալու համար, այլ և այն պատճառաւ, որ այդ դէպքում միայն զանազան „պատկերներ“ կարող են ըստ արժանոյն գնահատվել: Այդ տեսակէտից՝ „Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը“ այսօր – ինչպէս և մի ամբողջ տարի առաջ – համարձակօրէն պնդում է, որ եթէ մեր առաջ այսօր կայ որևէ պատկեր՝ ապա միմիայն փայլուն և միանգամայն յափշտակո՛ղ պատկեր: Ով սիրտ ունի՝ թո՛ղ զգայ. ով մտածելու կարողութիւն ունի՝ թող նայէ իրերին այնպէս, ինչպէս կան:

Բանը նրանումն է, ոչ նախորդ ընդհանուր հրապոյրը հայկական խնդրով գլխաւորապէս առաջացել էր այն ցոյցերից, որ տեղի ունեցան Տաճկաստանի մեծ կենտրոններում, այն տեղերում, ուր ազատութեան ձըգտումը և հետևաբար կռուի անհրաժեշտութեան գիտակցութիւնը աւելի վաղ պիտի արտայայտվէր: Սակայն այդ ցոյցերը ինքնըստինքեան ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ գործի համար անհրաժեշտ խառնուրդ, ժողովրդի վրա որոշ չափով ազդող և յեղափոխական պատրաստութիւն ներշնչող մի միջոց – և միմիայն: Բացառապէս ցոյցերով, այն էլ հեռաւոր կենտրոններում, ոչ մի ժողովուրդ չէ ազատվել և չի ազատվիլ: Դորա համար պահանջվում է յարատև բնաւորութիւն և ահարկու ծաւալ ունեցող կռիւ, որ կարող է տեղի ունենալ միմիայն հայութեան մեծամասնութեան, հայ ժողովրդի անմիջական մասնակցութեամբը: Այս դէպքում միայն գործը ազատ կը լինի հազար տեսակ պատահական հանգամանքներից, այս դէպքում միայն նոյն իսկ քաղաքային ցոյցերը կը դառնան քրօնիկական անբուժելի ախտ կառավարչական օրգանիզմի համար:

Արդ, ինչ՞ պատկեր է ներկայացնում ժողովրդական կեանքը այդ տեսակէտից:

Վասպուրականցին այսօր ոչ միայն չէ խոնարհվում բազմաթիւ բանտարկութիւնների և անասելի անգթութիւնների առաջ, այլ և պատասխանում է դրանց մի շարք տեռորական գործողութիւններով: Այստեղ սպանվում է լրտեսը, այնտեղ ոստիկան ծառայողը, իսկ գաւառի խորքերում քուրդ աւազակապետը, հայ հրոսախմբի հետ ընդհարվելով, կոցնում է իր մարդկանց մեծ մասը: Վան տանող մի ճանապարհին նորերս նահատակվում են զէնք փոխադրող հայ գիւղականներից 3 հոգի: Ալաշկերտցին՝ տանջված, մաշված, չքաւորութեան հասցրած ալաշկերտցին՝ այսօր զինվել է „խոտորնակին խոտորնակ“ սկզբունքով և քրդերի յարձակումներին պատասխանում է միևնոյն դրամով. քուրդը իր ամբողջ պատմութեան մէջ առաջի անգամն է, որ ստիպված է մտածել իր կեանքի և գոյքի ապահովութեան մասին հայերից: Սարուխ մշեցին պատժումէ իր լրտեսներին և ոչ մի սպառնալիքների առաջ եր-

կիւղ չէ կրում յանցաւորներին ծածկելու, պաշտպանելու: ,,Զէնք, զէնք տուէք"... ասում է Մշոյ ամեն մի գիւղը այժմ. ,,հազարաւոր տղերք կը փափագեն գործ տեսնել"... Եւ ճշմարիտ. անցեալ դեկտեմբերին յանդուգն կուռում նահատակված Ասատուրը, այնուհետ Արաբօյի հրոսախումբը, Լէոն երիտասարդը իր ընկերներով, Հասրաթ Մահտեսի-Մելքոնեանը, նրա եղբայր Աւետիսը, Մարգարեան Թորոսը և ուրիշները աւելի քան կենդանի ապացոյցներ են սիրեալ ,,կարուկների" գոյութեան: Սանոյ հարկատու գիւղերը միւս ազատ գիւղերի վիճակն են ձեռք բերում... Բանտարկեալներին փախցնելը և ձերբակալվածներին թշնամու ձեռքից խլել և անյայտացնելը նոյնպէս յեղափոխական որոշ տրամադրութիւն արտայայտող երևոյթներ են, որ նկատվում են հայ ժողովրդի կեանքում վերջին ժամանակներս:

Միւս կողմից ուշադրութեան արժանի է կառավարութեան երկիւղը և զգուշութիւնը, որով նա աշխատում է չը դրգռել հայ ժողովուրդը. փաստ է, որ մանիշեների և անփորձ մեղադրեալների ցուցմունքներից կառավարութիւնը ամեն անգամ չէ օգտվում նոր ձերբակալութիւններ անելու համար: Այդ արդէն աւելի քան պարզ նշան է, որ թիւրք կառավարութիւնը նկատում է թշնամու աճող ոյժը:

Ինչքան և նշանաւոր են այս փաստերը ինքնըստինքեան, բայց աւելի նշանաւոր է դրանց ամբողջութիւնը-ընդհանուր ներքին խորհուրդը և այն հեռեականութիւնը, որով չը նայած ոչ մի տեսակ դժոխային պայմաններին՝ այնուամենայնիւ օրէցօր աւելի և բազմանում են սոքա: Ճշմարիտ է՝ այս փաստերը աղմուկ չեն բարձրացնում, որովհետև կատարվում են լրագրական, դիպլոմատիական և հեռագրական կենտրոններից դուրս. ճշմարիտ է՝ դրանք չեն տարածվում աշխարհիս բոլոր ծայրերը. ճշմարիտ է՝ դրանք չեն արժանանալ ,,լուսամորեալ Եւրոպայի" ուշադրութեան-և ոչ միայն Եւրոպայի, այլ և մեր անմիտ հասարակութեան մի նշանաւոր մասի, որը շնորհիւ իրէն յատուկ կապկութեանը ոգևորվում է այն չափով, որ չափով մեր գործերով հիտաքրքրվում են օտարները. բայց մենք ողջունում ենք այս երևոյթները ի բոլոր սրտէ, անարտայայտելի յափշտակութեամբ, որովհետև դոքա, անկասկած, վկայում են յեղափոխական շարժման զարգացումը ժողովրդի մէջ... Այստեղ արտաքին էֆֆեկտներ, աղմուկ և սենսացիա քիչ է, բայց այստեղ է ապագայ խլացընող աղմուկի գրաւականը, այստեղ են ապագայ կուրացնող էֆֆեկտների սերմերը, այստեղ է ապագայ յաղթական մեծ տօնի նախապատրաստութիւնը...

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Մինչդեռ տաճիկ կառավարութիւնը իւր սովորական ճնշումների վրա աւելացնում է նոր, աւելի քաղաքակրթուած ձևի ճնշումներ. մինչդեռ նա, խստաբար հալածելով մեզ, կենդանութեան ամենաթեթև նշոյլ անդամ նկատելուն պէս, շոյում, վարձատրում է լրտեսներին, դաւաճաններին, հաւատափոխներին, անպատիժ թողնում ժողովրդի հարստահարիչ զանազան տեսակ աւազակներին, միևնոյն ժամանակ այս կամ այն մահնայով խլում է հայերի ձեռքից հողերը քրդերին յանձնելու համար. մի խօսքով ,,մինչդեռ նա ձգտում է ամեն միջոց գործ դնելով ստորացնել մեզ բարոյապէս և նիւթականապէս,- դարերից 'ի վեր ճնշված հայի տրամադրութիւնը զգալի կերպով փոխվում է: Ստորադրեալ խղճալի ,,ՊԼան" (այս խօսքով են անուանում հայերին քրդերը) այժմ գործով է ցոյց տալիս իւր բողոքը, բազկի ուժով է պատասխանում իր բոլոր ճնշողներին, դաւաճան-Յուդա եղբայրներից սկսած մինչև աւազակ աղաները և ապականուած կառավարչական պաշտօնեաները:

1892 թուականը պէտք է նշանաւոր համարել մեր երկրի յեղափոխական գործի համար:

Դեռ տարին նոր էր սկսվում, երբ քաղաքիս մօտ եղած դաշտի ձիւնը ներկուեց ամենաանպիտան, ամենագարշելի հայերից մէկի արիւնով: 27 տարեկան մատնիչ և լրտեսը, որը անցեալ ամառ գնացած էր Պոլիս իւր եղբայրների դէմ տեղեկութիւններ տալու համար, ստացաւ իր արդար պատիժը. նա սպանվեցաւ օր ցերեկով: Գուցէ վճիռը այսքան խիստ չ'լինէր, եթէ մատնութեան վերայ չ'աւելանար մի ուրիշ մեղք սատկացրած լրտեսի կողմից: Սրիկայ վաշխառուն շատ գիւղացիներ ղրկեց իրենց մշակած արտից, հերկած հողից, և ահա, աղքատացած գիւղացու տեղ պատասխանը տուաւ հայ յեղափոխականը, և նշան Թարգիբաշեան վերջացաւ մեր միջէն:

Նոյն խիստ և արդար պատժին արժանացաւ Օգոստոսի վերջերում և Գէորգ Զրաղեանը Վարագից վերադառնալու ժամանակ: Կառավարութեանը արած մատնութիւնների և ուրիշ մատուցած ծառայութիւնների շընորհիւ ազատուելով 15 ամեայ բանտարկութիւնից, Զրաղեանը շարունակում է իր հին արհեստը, մատուցանում է տեղեկագրեր Պոլսի բարձր աստիճանաւորներին, սկսած Սուլթանի անձնական քարտուղար Սէր Քեաթիբ Սաբեա փաշայէն: Բահրի փաշան Վան կուսակալ նշանակուելուն պէս՝ նա էլ վերադառնում է հայրենիք, ուր պակում է իր գործունէութիւնը, 150 - 200 ,,կասկածելի" անձանց ցուցակ ներկայացնելով տէրութեանը: Վրէժխնդիր հրեշտակը վերջ տուեց և այդ գարշելի արարածի կեանքին:

Տարին ազգի այս երկու դաւաճանների մահով չէր վերջանայ, եթէ Նախախնամութիւնը քիչ ուրիշ կերպ չ'դատէր: Սա երրորդ անգամն էր, որ Թէրջիբաշեան Յարութիւն էֆ., այս հարուստ, ամենաանող որմ հարստահարիչ, վաշխառու, ոստիկանութեան համամիտ և դաշ-

նակից, ուստի երիտասարդութեան կատաղի թշնամի, իր գործակից Տէր-Պօղոսեան Օհանէսի հետ աղատվում են մահից: Այս հրեշ մարդկանցից ամէն ինչ կարելի է սպասել, և շատ ափսոս որ Սեպտեմբերի 10-ի Տիրամօր թաղի մէջ կատարուած փորձը անյաջող անցաւ: Վէր.քը, թէև ծանր, բայց մահացու չէր: Վէր.քից ստացած հիւանդութիւնը երբէք չէ կարող քաւել նորա կատարած բոլոր կեղտոտութիւնները: Թո՛ղ դեռ սպասեն ուրեմն Թէրզիբաշեանն և իր համախոհ-գործակիցները...

Նոյնը պէտք է ասել և Տիգրան վարժապետ Ամիրջանեանի մասին, որը ինքը իրէն դատապարտեց մահի, դաւաճանելով իր գաստիարակութեան յանձնած աշակերտներին:

Այո՛, լրտեսները, դաւաճանները արժանի են պատժի, արժանի են մահի: Արժանի են պատժի այն ամենքը, որոնք իրանց սեփական շահի համար զոհում են ընդհանրութեան շահերը, արժանի են մահի ամենքը, որոնք ,,ես"-ի համար ոտնակոխ են անում մեր հարազատ Մօր արիւնն ու հոգին:

Մահի արժանի են պատերազմի դաշտից փախչողները, մահի արժանի են հայ բէնեգատները: Այսպէս, պիտի սպանուէր և Կարթալան գիւղի բնակիչ բէնեգատ Մկրտիչը: Թուլահոգի, մարմնասէր գիւղացին չէ կամենում տանել իր եղբայրների հետ ընդհանուր ծանր լուծը. նա տեղափոխվում է շամոքցի քրդերի մօտ և ընդունում մահմեդականութիւն իր կնոջ հետ միասին: Այս վարմունքը զզուանք և կատաղութիւն է յարուցանում բոլոր դրացիների սրտում, և նորա ազգական Իսաջանը ճանապարհ է ընկնում արժանի վրէժխնդրութիւնը տալու: Դժբաղդաբար բէնեգատ հայը տանը չէ լինում և դաշոյնի հարուածների տակ ընկնում է միայն դաւաճանի կինը: Մինչև այսօր Մկրտիչը ծածկվում է հայերից, վախենալով մի գուցէ դուրս գայ մի նոր Իսաջան: Օսմանեան կառավարութիւնը, սպանողը չ'գտնելով, բանտարկում է Կարթալանից 6 հոգի, 'ի միջի այլոց և Մկրտչի երիտասարդ որդուն, որը մնացել էր հայութեանը հաւատարիմ:

Վասպուրականի յեղափոխականների կռիւը չէ բաւականանում միայն նղովեալ հայերով. նա տարածվում է մեր ժողովրդի թշնամիների մի սասի մասի վերայ:

Հոկտեմբեր ամսին անաջող վորձ եղաւ սպանել քոմիսեր Մէհմէդ էֆ. անունով թուրք ոստիկանին, որը իր հսկողութեան տակ դրած թաղերի ահ ու սարսափն էր:

Նոյն ամսին վիրաւորվեց Խաչ փողոցի պօլիս Նաբին:

Աւելի աջող ելք ունեցաւ մեծ քենդրչիէ պօլիս շէյխ Հէյդէրի Նուրիի սպանման փորձը: Այս Նուրին բնակվում էր հայ թաղի մէջ, ազատ ել ու մուտք էր անում հայ ընտանիքներում, գիտէր լաւ հայերէն և դէպքը բերած ժամանակ մեծ վնասներ էր բերում յեղափոխական գործին: Բացի դորանից, իբրև ազնուական, հողատէր և պաշտօնեայ, նա անզուսպ իշխում էր Սիկայ, Լամզկերտ, Զոլական.ք, Սարմանդիւղ, Ռսկեգակ և այլ հարևան գիւղերում: Նուրին դարձել էր գիւղացիների գլխին նոր կեղեքիչ կառավարութիւն: Գիշակերի մարմինը կտոր կտոր արած գտան քաղաքի մի փողոցում, և գիւղացիք ազատուեցան դոնէ այդ բռնակալ իշխանից:

Բայց ահա Վասպուրականի կեանքի մէջ վաղուց չը տեսնուած մի մխիթարական երևոյթ: Հայ գիւղացին, յոյսը կտրելով կառավարութիւնից, իր ձեռքով է պատժում այն քիւրդ աւազակներին, որոնցից դարերի ընթացքում նա սովոր էր միայն դողալ:

Քանի տարի է, ինչ Կրաւանցի ազնուական ցեղից Շաքիր յայտնի աւազակը ազատ համարձակ գործում էր Շատախի, Նորդուզի, Հայոց Ձորի, Կառճկանի կողմերում: Նա մի պատուհաս էր հայ գիւղացիների համար: Ընդդիմադրել Շաքիրին ոչ ոք չէր համարձակվում: Դա նոյն Շաքիրն է, որը իր եղբօր հետ միասին սպանեցին Շատախցի Մուխսի Սահակին (տես Դրօշակի նախընթաց համարը): Նորա ասպատակութիւնները և աւազակութիւնները հասել էին այն աստիճանի, որ Տաճիկ կառավարութիւնը ստիպված եղաւ մինչև անգամ բանտարկել նորան, բայց, ըստ իր սովորութեան, շուտով արձակեց: Խրախուսվելով այս բանից, Շաքիրը ի հարկէ, աւելի է լրբանում, և, ով գիտէ, էլ ինչեր պէտք էր կատարէր, եթէ նորա դէմ դուրս չ'գար հայ գիւղացու նոր հոգին: Սեպտեմբերի վերջերին Շաքիրին իր 4 ընկերներով Կառկառի ձորակի մէջ պաշարում են մի խումբ զինված հայեր: Կտրիչ երիտասարդները կուի մէջ կոտորում են բոլոր քրդերին, բացի իրան Շաքիրից, որը ազատվում է միայն իր լաւ ձիու շնորհիւ:

Ինչ ասել կուզէ, որ այս անսովոր դէպքը ոգևորել է հայերին չափազանց:

Տեսնենք, ինչ ազդեցութիւն կունենայ աւազակի վրա առաջի անգամ տեսած անախորժ ընդդիմադրութիւնը. կը զսպէ արդեօք Կրաւանցի Շաքիրը իր աւերումները, թէ կը դառնայ աւելի վրէժխնդիր, ցոյց կը տայ մօտիկ ապագան:

Կուսակալ Բահրի փաշան կատաղած դիմում է ամէն կողմ փէռօրիսաներին գտնելու և աջուձախ զուր ձերբակալութիւններ է կատարում: Հենց Վան ոտ դրած օրից նա բանտարկում է և հալածում բոլոր ,,կասկածելի" անձնաւորութիւններին, որոնց ցուցակը ամէն մի րոպէ պատրաստ են ներկայացնել զանազան նշաններ, Զրաղեաններ, կամենալով մի հարուածով վերջ տալ մեր յեղափոխական շարժման: Բայց դորա պատասխանը եղաւ մեր կողմից Տիգրան Ամիրջանեանի, Զրաղեանի, Մէհմէդ էֆ., Նաբիի, Թէրզիբաշեանի Տէր-Պողոսեանի, Նուրիի դէմ արած աջող և անաջող փորձերը, Կարթալանի դէպքը և Շաքիրի խմբի կոտորիլը:

Զը նայելով, որ ամէն մի փորձից յետոյ բանտը լցվում էր նոր ,,կասկածաւորներով", ինչպէս, օրինակ, Թէրզիբաշեանի, Տէր-Պողոսեանի և Կարթալանայ խնդիրների առթիւ բանտարկված են մօտ 20 հոգի (Պուլուխեան, Փերոզեան...), Զրաղեանի սպանութեան՝ ամբաստանեալ Յ. Քանքանեանի ծերունի հայրը, Նուրիի սպանութեան՝ Գ. Թէրլիմազեան, Ռուբէն և Մանուկ Շատուորեաններ, հացագործ Յարութ. Տէր-Բարսեղեան, Յ. Սահաթճեան... մօտ 25 հոգի, Շաքիրի խմբի կոտորման՝ 15 Կաճէտցի երիտասարդներ, որոնց մօտ գտնված են 10 հրացան,- չը նայելով այս բոլոր ձերբակալու-

թիւններին, չը նայելով այն „ահ ու սարսափին", որը տարածում է կուսակալը, նորա սպասածին հակառակ, յեղափոխական գործը վերջ չէ ստանում, այլ ընդհակառակը՝ նա քանի գնում է, աւելի սուր կերպարանք է առնում. սպանման փորձերը կատարվում են մեծ մասամբ քաղաքի մէջ օր ցերեկով, և անհատական տէռորը մեծ յաջողութեամբ փոխվում է խմբականի:

Միւս կողմից, կառավարութեան վերոյիշեալ խստութիւնները ճնշիչ ազդեցութիւն են թողնում ընդհանրութեան վրա: Ծանր է տեսնել բազմաթիւ երիտասարդ ոյժեր բանտում փթելիս, հալածուածներ՝ հայրենիքից դուրս տանջվելիս. ծանր է լսել իրենց միակ ապրուստ հայթայթող գաւակից զրկված ընտանիքների լացը. աւելի ծանր է այն, որ այդ բոլոր թշուառութեանց գլխաւոր պատճառը հենց մեր արիւնակիցը, մեր եղբայրն է... Ծանր է այս բոլորը, սակայն մենք չենք վհատում, ապագայի յոյսը չենք կորցնում: Արդարացի գործը միշտ յաղթող կը հանդիսանայ: Հարցը միայն ժամանակի մէջն է...

ՆԱՄԱԿ ԱԼԱՇԿԵՐՏԻՑ

Զեզ, եղբայրներ, քաջ յայտնի է, որ առանց այն էլ մեծ հարկերը կը կրկնապատկին, երբ հարցը դոցա ժողովելուն կու գայ. յայտնի է անշուշտ, որ կառավարութիւնը, տարէց տարի աւելցնելով իր ծախքերը՝ այդ բոլորը կը բարդէ գիւղացու վզին, և վերջինս կը ստիպուի պանդխտիլ „փարա" ճարելու համար: Ցայտնի է նոյնպէս, որ՝ բացի անտեսապէս ժողովրդին քայքայող այդ զօրաւոր պայմանը՝ կան և ուրիշ մեզ մաշող հանգամանքներ, որք առաջ կ' գան կառավարութեան ապականութենէ: Կոյրն անգամ պիտ զգայ մեր ծանր դրութիւնը, քանզի տաճկական անարդարութիւնը մեր կենաց ամեն կողմերը կ' թափանցէ:

Ահա ձեր առաջ բանտարկուած և վերջին թշուառութեան են հասցրած մի քանի տասնեակ հայեր. ինչ է դոցա մեղքը. ինչ՞ու համար կ' տուժեն դոքա: Այդ բանտարկութիւնների մեծ մասը կատարվեցան դեռ երկու տարի առաջ գաւառապետ Ահմէդ-բէյի հրամանաւ: Ահմէդ-բէյը ոմանց կ' մեղադրէ ռուսաստանցոց հետ յարաբերութիւններ ունենալում, ոմանց իբրև խռովարար և յեղափոխականք, քանզի դոքա այն անձինքներէն են, որք Ալաշկերտէն Պայազիտ անցան Պարսկաստան գաղթելու նպատակաւ: Բարսեղ-աղա Զաքարեանը, Թադէոս-աղա Պետրոսեանը, Հայրապետ-աղա Մուրադեանը, Յարութիւն և Սարգիս եղբարք Մուրադեանները, Գրիգոր Սուքիասեան, Աբրահամ Բրկեան, վարժարանի երկու ուսուցիչներ. Յարութիւն Դոդոխեան և Գէորգ Սարգսեանն-բոլորը Ալաշկերտէն և շրջականներէն-Կայսրբէթի տանուտէր Աւետիսը, Համատ գիւղէն Մելիք և Յովնան եղբայրները ու մի քանի ուրիշներ,-ահա այն զոհերը, որ մինչև այժմ կ' տուժեն բանտում:

Անցեալ գարնան բանտարկվեցան նախ Վաղարշակերտի բանտում և յետոյ Պայազէտ փոխադրվեցան Հացտուր գիւղէն 8 հոգի: Հարցրէք ապա ինչ՞ու: Սրանից 16 տարի առաջ, հայ կին մը փախցնելու պատճառաւ սպանվել էին 2 քիւրդ. և ահա գաւառապետ Ահմէդ-բէյն այսօր այդ սպանութեան առթիւ մեղադրում, նեղում է ում և որչափ կուզէ: Թշուառներից մէկը, չ' կարողանալով տանել բանտարկեալի կեանքը՝ վախճանուեց:

Մեծ նեղութիւն կ' կրէ մեր ժողովուրդը և քրդերէն: Նեղութիւնը կ' սաստկանայ առաւել ևս այն պատճառաւ, որ վերջին 2 տարիները կառավարութիւնը բաւականին քրդեր բնակեցրեց հայերի գիւղերում: Ցայտնի է, որ վերջին պատերազմից յետոյ Ալաշկերտի և Բագրևանդայ գաւառներէն գաղթած հայերից մի մասը չ' վերադարձաւ իր տեղ: Զը նայելով սակայն, որ դոցա տեղը եկան և բռնեցին ուրիշ գաւառների հայեր, կառավարութիւնը սկսաւ հեռացած հայերի հողերը քրդերին բաժանել: Այսպէս. Վիլանցի ցեղապետներէն Սելիմ փաշային իր ազգականներով տրվեցաւ Համատ գիւղը. նոյն ցեղի Ռասուլ-բէյին և ուրիշ մի քանի անձանց տուին Զիրայ գիւղի կալուածները. Հիւսէյն-բէյին՝ Քոփղոան գիւղը. Ռէկան-բէյին՝ Խրտր գիւղը. Ահմէդ էֆէնդուն Մանկասար գիւղը. իսկ Սբ. Յովհաննու վանքի սեպհական կալուածքի մի մասը Ռուսաստանից գաղթած Ֆաթիհ-բէյին տրվեցաւ: Քրդերը բնակվեցան հայերու մէջ և ամեն մի գիւղ յանձնվեց քուրդ բարբարոսներին. գայլը ընկաւ ոչխարի հօտի մէջ և անխնայաբար սկսաւ իր չարագործութիւններ. գողութիւն, աւազակութիւն, թալանումներ, որ առանց այն էլ մշտական երևոյթներ էին՝ աւելի ևս բազմացան. այդ բաւական չէ, հայը կը ստիպվի աւազակ քիւրդ աղաների և բէյերի համար ամեն տեսակ ծառայութիւն անել. խուսափել այդ հարստահարումէն անկարելի է հայու համար, քանզի անոր խոտը, ցորեանը, գարին կ' այրվին, անասունները կ' անհետանան: Բաւական է ասել, որ յուլիսէն սկսած՝ միայն Զեյտկան գիւղէն մի քանի անգամից տարած են 40 եզ, 12 գոմէշ, 70 ոչխար և 60 կով... միևնոյնը և ամեն տեղ:

Այս ամենէն սակայն չ'եզրափակիք, որ ալաշկերտցին բնաւ կորած է հայութեան համար. ինչքան և ստրկացած լիներ մեր մարդը, նա շատ աղէկ կը հասկնայ իր վիճակը և զանազան միջոցների կը դիմէ իր բողոքը արտայայտելու կամ իր վիճակը բարեկարգելու համար: Այդպէս՝ աշնանը յիշեալ գիւղեր 20 ընտրված մարդիկ ճամբեցին Պայազէտ նահանգապետին բողոքելու, բայց որոշ հետևանքի չը հասնելով՝ վճռեցին գաղթել: Բարձելով ամեն ինչ սայլերի վերայ՝ նոքա ժողովեցան գնալ Կարին և ներկայանալ վալիին: Հոկտեմբեր ամսի ցրտերին էր, երբ մօտ 300 սայլերով գիւղացիք, գիշեր ցերեկ բաց երկնքի տակ անցկացնելով՝ ճանապարհ ընկան դէպի Կարին... Սակայն վիճակված չէր դրանց Կարին հասնել: Կառավարութիւնը, պատրուակ բերելով խօլերայի առիթով իբր թէ կարգած կարանտինը՝ կարնէն ուղարկած զօրքի ոյժով ստիպեց գիւղացոց իրենց վայրերը դառնալ և նախկին թշուառ կեանքը շարունակել:

Բայց օրինական բողոքները և երկրէն գաղթելը միակ միջոցները չէն, որոնց կը դիմէ ալաշկերտցին իր

ներկայ վիճակի մէջ: Նոր սերունդը, իր զգայուն երիտասարդներով նոր ճանապարհներ կը գտնէ, նոր շաւիղներ կը բացէ դէպի իր դրութեան բարւոքումը. գուցէ նոյն իսկ շատ և շատ հեռու չէ այն օրը, երբ իսպառ մոռացվին հին միջոցները: Եւ իրաւ անկարող լինելով գոհացում տալ քրդերի բոլոր պահանջներին, ժողովուրդը սկսած է աղմուկ բարձրացնել և իր թշնամիներին դիմադրել: Հայ գիւղացին սկսել է խոտորնակին խոտորնակը հատուցանել... Գիւղական երիտասարդութիւնը շատ տեղերում ոչ միայն դիմադրում է քրդերին, այլ և նոցա խաղաղացնելու համար ինքն է սկսել յարձակումներ գործել այդ աւազակաց վրա: Ահա ձեզ երկու օրինակ: X. գիւղի երիտասարդները զանազան ժամանակներ, քրդերի հասցրած վնասների փոխարէն՝ կը քշեն նոցանից 18 եզ, կով և կ'այրեն 17 խոտի դէզ, 170 սայլ արմտիք: N. գիւղի երիտասարդները օգոստոս ամսին կ'այրեն իրենց շրջակայ քրդերի 100 սայլ արմտիքը, իսկ հոկտեմբերին 4 կողրիչ տղերք՝ մի գիւղի վրա գնալով, հրացանի գնտակների տակ սարսափի մէջ կը ձգեն քրդերին և նրանց ամբողջ հօտը կը քշեն: Սակայն անկարող լինելով ամբողջ հօտը թագցնել, կողրիչները կը զատեն հօտից 25 գեր մագի և գիւղը հասցնելով՝ ամենը կը մորթեն:

Այս կերպ կ'ընթանան և այլ գիւղերի երիտասարդները, ու միանգամայն ուրախ սրտով և ամենայն համարձակութեամբ պիտ նկատիմ, որ այս ձևով մենք հասած ենք, անկասկած, զգալի հետևանքների. քիւրդը իրեն հասցրած վնասների առաջ՝ ստիպված է զգոյշ լինել դէպի հայերը, իր անելիքները ամեն անգամ սկզբնական նախահաշուի մը ենթարկել:

Այժ տուր մեզ, արդարացի Աստուած. համբաշխութիւն և եռանդ ներշնչի՛ր քո պատուէրները պաշտպանողներին. դարերով լռած ժողովրդի սրտում, ով թշուառների Աստուած, գոնէ մի անգամ լայն բոցով վառի՛ր վրէժխնդրութեան կրակը...

ՆԱՄԱԿ ՄՇԻՑ

Մեր երկրից սովորել էք միշտ լացի, հառաչանքի և յուսահատութեան ձայներ լսել. իմ նախկին թղթակցութիւններս էլ, իբրև արձագանք մշեցիների կեանքի, ոչ այլ ինչ էին, եթէ ոչ՝ ստրուկ և լքված ժողովրդի տառապանքների լոկ նկարագրութիւն... Այսօր ես ինձ երջանիկ եմ համարում, որ կարող եմ աւետել ի գիտութիւն մերայնոց, որ ճնշված, մաշված և յուսաբեկ մշեցին ևս կ'ճգնէ, ըստ կարելոյն, իր աղքատիկ լուման մատուցանել ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին: Վերջերս, այստեղ-այնտեղ, բուն ժողովրդի խորքերից, սկսում են հանդէս գալ անձնուէր կտրիչներ, որոնք անկարող լինելով այլ ևս դիմանալ միացեալ քիւրդերի և տաճիկ վարչութեան հալածանքներին, թողնում են իրենց «խաղաղ» կեանքը, տունը, ընտանիքը և անձնատուր լինում ժողովրդի պաշտպանութեանը:

Ահաւասիկ ձեզ մի քանի փաստեր:

Մատնիչ Կրպօյի սպանումը.

1892 թ. Սեպտեմբեր ամսին, 6 հոգուց բաղկացած մի հրոսակային խումբ՝ առաջնորդութեամբ ալիզրնանցի Լևոն երիտասարդի, մտաւ Ալիզրնան գիւղը և գնտակի 3 հարուածով շան սատակ արեց գիւղի ուէս, մշեցիներին քաջ յայտնի՝ մատնիչ Կրպօյին: Զգելով սպանված Կրպօյի քովը մի թղթի կտոր՝ «Այս է մատնիչի վերջը» խօսքերով և մի քանի դատարկ փամփուշտ, խումբը հեռանում է գիւղից: Մի կողմ թողնելով սպանված ուէսի Մշոյ վարչութեանը արած բազմաթիւ ծառայութիւնները, այստեղ կը յիշատակեմ միայն ամենից վերջինը: Սրանից 10 օր առաջ ուէս Կրպօն գնում է Մուշ և յայտնում վարչութեան, որ վերոյիշեալ Լևոնի եղբայրը կը շրջէ ժողովրդի մէջ և կը քարոզէ ապստամբութիւն, որ շուտով սա իր եղբօր Լևոնի հետ սկսելու են կոտորել տէրութեան հաւատարիմ մարդոց և այլն:

Հաւատարիմ Կրպօյի սպանման լուրը Մուշ հասնելուն պէս՝ կուղարկվի այստեղից Ալիզրնան մի գունդ զօրք և մի քանի ոստիկան: Ալիզրնանում շղթայակապելով Լևոնի ծերունու հօրը և ուրիշներին, զօրքը անցնում է այնտեղից շրջակայ գիւղերը, որոնք նոյնպէս ենթարկվում են ամենախիստ խուզարկութեան: Տաճիկ գաղանաբարոյ զինուորների խուզարկութիւնները կատարվեցին, ինչպէս և միշտ, կրքերի անզուսպ արտայայտութեամբ: Կատաղած զինուորները, առանձին չարախնդութեամբ թափեցին իրենց զարոյթը մանաւանդ Բերդակ գիւղի վերայ: Այս գիւղը այն օրից յետ, երբ ձերբակալվեց այստեղ նշանաւոր Արաբօ աւազակը, յայտնի է Մշոյ վարչութեանը իբրև յեղափոխութեան բուն, կենտրոն: Բռնելով այստեղ Առաքելեաց վանքի ջաղացպան Ցարութիւնին, կապում են նորա ձեռքերը, ոտքերը, սեղմում են ամորձիքները և սկսում չարաչար գանակոծել. չը բաւականալով սորանով խեղճ Ցարութիւնին նստեցնում են մի սրածայր փայտի վերայ... Նոյն տեսակ բարբարոսական չարչարանքների ենթարկում են և հետևեալ անձանց. ջաղացպան Թաթոյին, գիւղապետ Ցարոյին, գրագիր Պետրոսին, ծերունի Ցոնոյին և այլն... իսկ գիւղի Տէր-Օհանէս քահանային, ծեծելով և խայտառակելով, տանում են եկեղեցի և այնտեղ բռնի թքեցնել են տալիս սբ. խաչի և պատկերների վերայ: Այստեղ ես էլ չեմ յիշում գիւղացիների գոյքի կողոպտման, կանանց և աղջկերանց անպատվելու մասին. սրքա սովորական չարիքներ են մեզանում:

Զը նայած այս դժոխային չարչարանքներին, որոնք տևեցին ամբողջ 4 օր, ոչ մի մարդու բերանից դուրս չը թռաւ մատնութեան մի խօսք անգամ...

Բերդակ գիւղը աւերելուց յետ, թուրք զինուորները կանցնին Առաքելոց և Աղբերիկ վանքերը, Խասգիւղ, Քօլօսիկ և այլ գիւղեր, ուր տեղի կունենան նոյն խուզարկութիւններ և նոյն խստութիւններ, նոյն ապարդիւն հետևանքներով:

Վերոյիշեալ խումբը կը պտտէր խուզարկվող գիւղերի մօտերքը, գրեթէ զինուորների քթի տակ:

Մօլլա Խուրշիդի սպանումը.

Այս դէպքից մի քանի օր անց մի շար և մոլեռանդ տաճիկ, Մօլլա Խուրշիդ անունով, կառավարութեան թելադրութեամբ կուղարկվի Սասնոյ Գալիկուզան գիւղը խաբէութեամբ (կառավարութեան մարդ չի համարձակվիլ ոտք կոխել Սասուն) այնտեղից Հէքիմ Պետօյին բերելու Մուշ՝ այստեղ նորան բանտարկելու նպատակով: Այս ժողովրդին սիրելի Հէքիմ Պետօն իր քարոզէ միշտ բացարձակ անհնազանդութիւն դէպի կառավարութիւնը և վրէժխնդրութիւն դէպի բոլոր թշնամիները: Վերոյիշեալ Մօլլա Խուրշիդին ոչ միայն չը յաջողվեց խաբել Հէքիմ Պետօյին, այլ և ողջութեամբ վերադառնալ Մուշ. Տէրնկատար լերան մօտ մեր ծանօթ քաջերը գնտակահար արին այս տաճկին և ուղարկեցին ուէս Կրպօյի քով:

Ախանանցի Սերովբի քաջագործութիւնը և նորա մահը.

Հոկտ. 7-ին Ախնան գիւղի Սերովբ անունով երիտասարդը 4 ընկերներով կերթայ Զուխուր փայտ բերելու: Ցանկարծ կը յարձակվեն սորանց վերայ 4 զինված քրդեր և կուզեն խլել եզները: Սերովբը, չունենալով ուրիշ զէնք, բացի փայտից (ինչպէս յայտնի է, հայերին խստիւ արդելված է հասարակ զէնք անգամ գործածել), որ բռնած կունենայ ձեռքին, կը զարկէ այս փայտով քրդերից մէկի գլխին և կը յափշտակէ նորա հրացանը և սուրը. սակայն քիւրդի ընկերները թոյլ չեն տալիս Սերովբին գործադրել խլած զէնքը, անմիջապէս կը պարպեն իրենց հրացանները և կը սպանեն քաջ Սերովբին:

Ողջոյ՜ն ձեզ, Մշոյ ժողովրդի ազատութեան անվեհեր, մարտնչող առաքեալներ...

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ. Թիֆլիզ:

Խաղաղ հանգամանքներում չ՝սկսվեց նոր տարին Կովկասում հայ ազգաբնակութեան համար:

Դեկտեմբերի 27-ին հայ ժողովրդի բոլոր դասակարգերը իրանց վերջին հրաժեշտը տուին համարձակ և ազնիւ հրապարակախօս Գ. Արծրունուն: Տասնեակ հազարներից բաղկացած՝ ամբոխը արժանաւոր կերպով վարձատրեց այն մարդուն, որը ծառայում էր գաղափարին ընդունում քննադատող ոգին, որպէս հիմք բնական և հասարակական հարցերում: Ներկայ գտնվողներից շատերը տաղանդաւոր հասարակական գործիչ դագաղի առաջ մոռանում էին այն խնդիրները, որոնք հանգուցեալի կողմից սխալ կերպով էին հասկացվում: Արծրունին գիտէր, որ Եւրոպայի այժմեան առաջնակարգ կուսակցութիւնները չէն ընդունում անհատականութիւնը, որպէս կազմիչ-հիմք հասարակական կեանքի: 18-որդ դարու անհատի և խղճի ազատութիւն դաւանողն և պաշտպանողը համամիտ չէր Եւրոպայի դեմոկրատիական կուսակցութեան՝ թէ մարդկութեան թշուառութիւնը կայանում է „հարստութեան և աղքատութեան", „իշխանութեան և հպատակութեան" մէջ: Արծրունին չէր դաւանում, որ անհատի և հասարակութեան վերածնութիւնը և երջանկութիւնը կ՝ապահովուեն միայն այն ժամանակ, երբ կեանքը հիմնուած կը լինի աշխատանքի և նիւթական հաւասարութեան վերայ: Մեծ հրապարակախօսը, որպէս եւրոպացի ազատամիտ՝ չէր ընդունում, որ 19-որդ դարը բարձրացրել, իսկ մօտիկ ապագան իրագործելու է հասարակական կազմի փոփոխութիւնը եղբայրական և համայնական սկզբունքների հիման վերայ:

Այնուամենայնիւ Գր. Արծրունին ամենազնիւ և ամենաառաջադէմ գործիչներից էր: Նամանաւանդ կրուսը զգալի է մեզ համար, որովհետև հանգուցեալը կարելիութեան չափ արծարծում էր մեզ ամենից հետաքրքրող խնդիրը Տաճկահայաստանի ազատութեան ծանր հարցը:

Ազնիւ և համարձակ գործիչ, ընդունի՛ր և հայ յեղափոխականների կողմից այն վիշտն ու յարգանքը, որը արտայայտեց հայ հասարակութիւնը դագաղիդ առաջ:

Արծրունու թաղումը կատարվեց հանդիսաւոր կերպով, ինչպէս դեռ ոչ ոք չէր թաղվել ոչ միայն Կովկասում, այլ և ամբողջ Ռուսաստանում: Հանդէսը աւելի մեծ նշանակութիւն կտացաւ կառավարութեան բռնած ընթացքից: Ամսի 26-ին՝ թաղման նախորդ օրը սստիկանապետը պահանջեց, որ հանդէսը անցնի Լօրիս-Մելիքեան փողոցով (և ոչ Գոլովինսկի պրոսպեկտով) և պսակների համար ունենալ միայն 2 դրակառք. իսկ վերջը, զիջանելով կարգադրիչ մասնաժողովի խնդիրքին, թոյլատրեց ունենալ 7-ը: Ոստիկանապետի միջամտիլը այդպիսի մասնաւոր խնդիրներում վատ ներգործութիւն ունեցաւ ժողովրդի վերայ: Ամենքը զարմանում էին տեղական վարչութեան կամայական վարմունքին, և ընդհանուրի ցանկութիւնն էր չ՝ենթարկվել պ.պ. նահանգապետ Շերվաշիձէի և ոստիկանապետ Մաստիցկու անտեղի պահաջներին: Այդպէս էլ եղաւ: Երբ հանդիսի սկիզբը հասաւ Բարեատինսկայա և Լօրիս-Մելիքեան փողոցի անկիւնին, տեղի ունեցաւ մի Թիֆլիսում չը տեսնված դէպք:

Ամբոխը կանգ առաւ այդտեղ: Ոստիկանները և 4 հատ ձիաւոր կազակներ ստիպում էին համբերի դրօշակակիրներին, տիրացուներին և քահանաներին ծռել դէպի Լօրիս-Մելիքեան փողոցը. իսկ ամբոխը՝ հաւաքվելով և բռնելով Լօրիս-Մելիքեան փողոցի բերանը, աշխատում էր անցնել դէպի առաջնակարգ փողոցը: Ոստիկաններին և կազակներին սկզբում յաջողվեց ցրել ամբոխը և դրօշակակիրներից շատերին, մի քանի տիրացուների հետ ուղղել դէպի իրենց կարգադրած կողմը: Ամբոխը տեսնելով այս, աւելի ոգևորված խմբվելով նորից փակեց փողոցի անցքը: Ընդհարումը սաստկացաւ: Աղաղակները, շվոցները թնդացնում էին օդը: „Առա՛ջ, առա՛ջ" գոչումները խլացնում էին ոստիկանների պահանջները և հայհոյանքները: Պրիստաւներից (աւագ ոստիկաններից) մէկը, Սվիմնով ազգանունով, մօտեցաւ խաչվառը տանող տիրացուին, խլեց ձեռքիցը խաչվառը և կամեցաւ առաջնորդի դեր կատարել, ծռելով դէպի Լօրիս-Մելիքեան փողոցը. սակայն յաղթանդամ „տրակտիրիկ Գրիշան" (Գրիգոր Յակովբեան) յարձակվեց խաչվառը խլող ոստիկանի վերայ, ոյժով

առաւ. Եկեղեցական սրբութիւնը և անցաւ ժողովրդի առաջը: Բազմութիւնը առաջ մղեց հոգևորականներին և դագաղի հետ միասին անցաւ պալատական փողոցը: Անընդհատ յաղթական ուռանները, գլխարկների ծփալը օդի մէջ, մի տեսակ ներդաշնակութիւն էին կազմում ամբոխի միահամուռ շարժման հետ:

Այդպիսով հանդէսը առաջ շարժվեց, անցաւ կառավարչապետի պալատի առջև և ուղղվեց դէպի Խօջեվանքի գերեզմանատունը: Ճանապարհին աչքի էին ընկնում Ալիւրի մէյդանի և քաղաքների (մրգավաճառների) փողոցում շինված սգոյ կամարները:

Հետևեալ օրը անսպասելի կերպով նահանգապետի կարգադրութեամբ սկսվեցին ձերբակալութիւններ: Վերջը իմացվեց, որ ոստիկանապետի մօտ կայացել է գաղտնի ժողով, որը և կազմել է ձերբակալվողների ցուցակը: Բանտարկվեցան մօտ 20 հոգի: Բացի 6 հոգուց, որոնց տարան Մետեխի բանտը, մնացածներին զատ զատ պահում էին ոստիկանատներում: Շատերն (՝ի միջի այլոց մի քանի վրացի) թէպէտ չը բանտարկվեցան, բայց արժանացան յանդիմանութեան և տուգանքների կառավարութեան կողմից:

Ռուս վարչութեան բռնած ընթացքից երևում էր, որ հանգամանքներին շատ լուրջ նշանակութիւն էր տրվում: Տէրութեան վախը աւելի ևս սաստկանում էր բազմաթիւ անտորագիր սպառնացող նամակներից: Վարչական պաշտօնեաներից շատերը համոզված էին, որ չբօրհնեաց հանդիսին կարող է պատահել արիւնհեղութիւն. խօսվում էր, որ կառավարութեան տներից մէկը նոյն օրը պայթելու է, որը և կը լինի ապստամբութեան նշան:

Այն ինչ ժողովուրդը, ապշելով տէրութեան ձեռք առած միջոցներին և կարծելով, թէ գործը աւելի խիստ կերպարանք կ'ստանայ բանտարկեալների վերաբերմամբ սրտի մօտ ընդունեց վերջիններիս վիճակը, ամեն կերպ աշխատում էր ազատել նոցա և պատրաստվեց աքսորման դէպքում նիւթապէս ապահովել հայրենիքից հեռացրածներին:

Չը շնորհաւորելով քաղաքագլխին Ծննդեան օրը, համքեարները դորանով կամեցան իրենց բողոքը յայտնել քաղաքագլուխ պ. Արգուտինսկուն, որը բանտարկեալների վերաբերմամբ չեզոք դիրք էր բռնած:

Անձիշդ լուրերի հիման վերայ Պետերբուրգից կարգադրութիւն եղաւ Զբօրհնեաց օրը կրկնապատիկ զօրք դուրս բերել հանդիսին և ղիւնորներին փամփուշտ բաժանել: Տեղացի դրուժինների հաւատարմութեանը կասկածելով, վարչութիւնը բաժանեց դոցա դատարկ փամփուշտներ: Միևնոյն ժամանակ վարչութիւնը հրամայում է կրկնապատկել ոստիկանների թիւը թատրոնի մէջ հայոց ներկայացումների ժամանակ, իսկ պ. Շերվաշիձէն պահանջում է քաղաքագլխից, որ համքեարների մասնակցութիւնը այս կամ այն հանդէսին կատարվի միայն նահանգապետի թոյլատրութեամբ:

Սակայն Յունվարի 6-ը անցաւ առանց որևէ պատահարքի:

Ժողովրդի յուզմունքը աւելի ևս սաստկանում էր կառավարութեան խաբեբայ խոստումներից՝ թէ «այսօր կամ վաղը կ'արձակենք»: Յունվարի 13-ին աղատեցին ոստիկանատներում եղողներին, իսկ 29-ին նոցա, որոնք պահվում էին Մետեխում:

Ոչափ Դեկտ. 27-ի ընդհարումը պէտք է վերագրել Արծրունու թաղման առթիւ կատարված կամայականութեանց, նոյնպէս և այն անբաւականութեանը, որը տիրում է Կովկասի ազգաբնակութեան մէջ շնորհիւ Ռուս պետական ընթացքին: Այս անգամ ժողովրդի համբերութիւնը կտրվեց, և հազարաւոր ամբոխը ընդդիմացաւ տեղական վարչութեան անտեղի պահանջման:

Եթէ նոյն իսկ այս դէպքում տեղի ունենար և արիւնհեղութիւն, թափած արիւնը կը լինէր Սուրբ արիւն, սպանվածները՝ նահատակներ...

Լ Ո Ի Ր Ե Ր

Մ Ո Ի Շ. Դեռ 90 թուին Վարդենիսի դէպքի առթիւ 12 հոգու հետ բանտարկված էր Հասրաթ Մահտեսի-Մելքոնեանը: Մօտ տարի մը անց Հասրաթին կը յաջողի փախչիլ, իսկ մնացեալ կտրիչներէն Ցով Հաննէս Մելքոնեանը և Մուրադ Ցարոյեանը բանտում վախճանեցան: Հասրաթի փախչելէն 2 ամիս յետոյ, երբ նա ծպտեալ կերպով կրկին Վարդենիս կը գտնվէր՝ 25 զապտիաներ անոր ձերբակալելու կու գան: Հասրաթը ղափազլու հրացանով մը կը պատռէ անոնց շղթան և անվնաս կ'անհետանայ: Կ' անցնին օրեր, ամիսներ: Հասրաթը իր հայրենակից քաջ Աստուրի հետ կ երևան Փակաուլու գիւղը, ուր Հասրաթի եղբայր Աւետիսի և երբեմն Մուշախշէն գիւղի ռէս Մարգար Թորոսեանի հետ մտերմանալով՝ բաւականին երկար ժամանակ շարունակ կը մաքառին տաճիկ կառավարութեան դէմ: Սակայն 3 ամիս ա. ռաջ, երբ Աստուրը և Մարգարը Մուշախշէն գիւղը կը գտնվէին, մտանիշների շնորհիւ՝ յանկարծ կը շրջապատվին զապտիաներով: Անվեհեր Աստուրը, չ'կամենալով անձնատուր լինել՝ կը սպանէ զապտիաների տասնապետին և բացված կռուի մէջ ինքն էլ կը նահատակվի: Միաժամանակ՝ Հասրաթը և Աւետիսը դէպի Մուշախշէն ճանապարհի ըլլալով, բուքի կը հանդիպին և կը ստիպվին Աւթալբաշիդ քիւրդ գիւղը մտնել, ուր կը ճանաչվին և կը բռնվին:

Մեր գիւղերէն մէկում պատանի տղայ մը ձերբակալված էր սպառնալիքներով և ծեծելով անոր ստիպել էին բոլոր իր ծանօթների անունները յայտնել: Մենք այդ արդէն կը գիտնայինք և կը սպասէինք խուզարկութեանց: Սակայն մինչ օրս մարդ չէ տուժած այդ ցուցմունքներէն: Իմացվեցաւ, որ կառավարութիւնը չէ ուզէր գրգռել զմեզ՝ յաճախակի ձերբակալութիւններ ընելով:

Ս Ա Ս Ո Ի Ն. Սասնոյ հարկատու մասից, ուր 2-3 տարին միայն մի անգամ են կառավարութեանը տուրք վճարում՝ աշնանը Մուշ են կանչվում գիւղական ռէսները հարկ պահանջելու համար: Աղբի, Զիթինք, Եղկարդ և այլ գիւղերի ռէսները չէն գնում. կառավարութիւնը կատաղում և զօրք է ուղարկում այդ գիւ-

ղերի վերայ, բայց գիւղացիք զէնքով դիմադրում և քշում են զօրքին: Այդպիսով Սասնոյ ազատ մասի վրայ կրկին մի քանի հայ գիւղեր աւելացան:

— Բսանաց գաւառի Խնձորիկ գիւղը կառավարութիւնը 7 զինուոր էր ուղարկել իր պէտքերի համար ջորիներ պահանջելու: Գիւղացիք մերժում են այդ պահանջը և ահա Խնձորիկ է գալիս գայմագամը մի ամբողջ գնդով: Խնձորեկցիք, դիտենալով որ իրենց մերժումը պիտի զայրացնէ գայմագամին՝ վաղօրօք պատրաստված են լինում, և գունդը երևալուն պէս՝ գայմագամին ողջունում են վառօդի մի այնպիսի կրակով, որ նա խսկոյն յետ է մղվում իր բոլոր զինուորներով:

— Աղբի գիւղում գայմագամը մի հայ էր ձերբակալել. գիւղից դուրս տանելիս՝ պատահում են դրան 2 համագիւղացիք և ստիպում են գայմագամին արձակել նորան:

ՎԱՆ. „Մի ցաւալի լուր: Վասպուրականի ճանապարհներից մէկի վերայ մեր զինակիր խումբը, որ յատկապէս զէնքեր էր փոխադրում Նահանգում, նուրբս ընդհարում ունեցաւ քրդերի հետ: Կատաղի կռուում խումբը կորցրեց 3 անձնուրաց ընկերներ: Թշնամիները տուին մի վիրաւոր և երկու սպանվածներ":

ԹԱՒՐԻԶ. Տաճիկ կառավարութիւնը լրտեսներ է ուղարկել մեր կողմերը՝ Բահրի փաշայի ձեռքից փախած և այստեղ ապաստան գտածներին որոնելու և ձերբակալել տալու:

— Մէկը միւսից սարսափելի լուրեր ենք ստանում Վանից: Բանտը լիքն է քաղաքական գործերում մեղադրվածներով: Բանտարկեալներին անտանելի տանջանքների են ենթարկում:

— Կուսակալ Բահրի փաշան բերել է տուել Վան Կոդուլի ձորում նահատակվածների կտրած գլխները և հրամայել, որ ձողերի ծայրերին անցկացրած՝ պտտացնեն Վանայ փողոցներում...

ԹԻՖԼԻԶ. Արծրունու Թաղման առթիւ ձերբակալվեցան հետևեալ անձինք. Զաւարեան (ագրոնոմ) Մալումեան և Տէր-Մարկոսեան („Աշակի" աշխատակիցներ), Դաստակեան („Կաւկաղի" աշխատակից), Տէր-Գրիգորեան (Թիֆլիսի քաղաքացի), Միրզոյեան և Լիսիցեան („Աղբիւր" ու „Տարազի" աշխատակիցներ), Աբէլեան (դերասան), Փիրադեան (ուսուցիչ), Օքոյեան, Տէր-Յովհաննիսեան, Գնունի, Դաւթեան, Դանդուրեան (վաճառական), Միրիմանեան, Յակոբեան (տրակտիրշչիկ), Տէր-Մկրտչեան, և Մկրտչեան: Զաւարեան, Մալումեան, Միրզոյեան, Փիրադեան և Տէր-Գրիգորեան 1 ամիս, իսկ միւսները 2 շաբաթ:

ԵՒՐՈՊԱՆ Թերթերում կարդում ենք.

— Մարսուանում և Կեսարեայում տեղի են ունեցել ժողովրդական մեծ յուզումներ: Բազմաթիւ մարդիկ են ձերբակալված:

— Հայաստանից ստացած լուրերը դարձեալ չափազանց յուզիչ են: Շարունակում են տեղի ունենալ արիւնահեղ ընդհարումներ քրիստոնեաների և մուսուլմանների մէջ: Կառավարութիւնը, երկիւղ կրելով ընդհանուր ապստամբութիւնից, հրամայել է աւելացնել զօրքերի թիւը:

ԿՈԴՈՒԼԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Տաճկական անսահման ճնշումները, բանտերում գործադրվող միմիայն Արևելքին յատուկ, մինչև խելագարութեան և մահացման աստիճանին հասցնող „խոստովանացնելու" ձևերը, քիչ չեն նպաստել երիտասարդների մի յայտնի դասակարգի երևան գալուն, դասակարգի, - որը ներկայումս ասպարէզ է դուրս գալիս, իբրև որոշ կազմակերպված ոյժ, որի գործունէութիւնը չէ կրում այլ ևս պատահական կերպարանք:

Երիտասարդների այդ դասակարգին էին պատկանում և Կոդուլի ձորի մէջ նահատակվածները:

Զնդանը թողած դարբինը, ասեղը ձգած դերձակը պատահական անձինք չէին Կոդուլի ձորում. առաջին անգամ չէին անցնում դոքա այդ ճանապարհով, ձորերի վտանգը անակնկալ երևոյթներ չէին դոցա համար. ամեն մէկը դոցանից մի անգամ, երկու անգամ չէ իր կեանքում հանդիպում այդ տեսակ վտանգների:

Դոքա նրանցից են, որոնք այրել են իրենց յետևից բոլոր նաւերը, որոնք „գլխից ձեռք են վերցրել", որոնք, թողնելով ընդմիշտ օրինական կեանքը, հրաժարվելով ապրուստի կարօտ թանկագին ծնողներից, սիրած էակներից, ընդունել են հայրենիքի ազատութեան ծանր խաչը և գիտակցաբար ընկել փուշ ու տատասկով պատած յեղափոխական ճանապարհի վերայ...

Ուշադրութեան արժանի են այդ սուս ու փուս, առանց աղմուկի գործող երիտասարդները: Արտաքին տեսքից դժուար է դրանց ճանաչել: Դժուար է կասկածել, որ այդ ըստ երևոյթին սառը սրտում եռում է վրէժխնդրութեան կրակը, որ այդ կասկածոտ, երկչոտ հայացքով մարդը թագցրած է իր մէջ հոգու անվեհեր ոյժ, որ նա պատրաստ է իւրաքանչիւր րոպէ զոհել իր կեանքը գաղափարի համար: Բայց դրանց հետ քիչ թէ շատ շփվողը չէ կարող չը ճանաչել, չը սիրել այդ անձուրաց երիտասարդներին:

Կոդուլի ձորում նահատակվածների յիշատակը դեռ երկար ժամանակ վառ կմնայ դրանց ընկերների և ճանաչողների սրտում: Նամանաւանդ դժուար է մոռանալ դոցանից մէկին, դարբին Ղազարին, այդ չափազանց համեստ, լռիկ մնջիկ, տոկուն յեղափոխականին (նորա մասին տես Դրօշ. 2 համարը):

Իրական կեանքի ծնունդ են դոքա. բուն ժողովուրդը է արտադրում, ոյժ, սնունդ տալիս դրանց. նորա իսկական ցաւերն են դրանց մէջ ոգի, եռանդ ներշնչում... Սա արդէն ամենալաւ ապացոյց է մեր յեղափոխական գործի ժողովրդականութեան, նորա յարատևութեան և յաջողութեան...

Դաշնակցութեան անծանօթներից խնդրվում է թղթակցութեան և նուիրատվութեան համար դիմել.
Docteur Longo. 12, rue de Puteaux. Paris.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպ